

Խնդրում եմ տեղեկացնել հանձնաժողովի անդամներին, աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներին, ինչպես նաև նախապատրաստել հակիրճ զեկույց՝ գործակարգավար. խորհրդակցությանը ներկայացնելու համար

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի գլխավոր քարտուղար պարոն Ա. Սաֆարյանին

Տիկին Ն.Գաբրիելյանին՝ Ի գիտություն

Ա. Սաֆարյան

« 15 » 04 2025թ.

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1. Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը՝

- Սևակ Բաբայան,
- Սիրանուշ Ղարախանյան,
- Լուսինե Գանջալյան:

2. Զբաղեցրած պաշտոնը՝ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի՝

- ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի պետ,
- հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր մասնագետ,
- ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության դիմումների քննարկման բաժնի ավագ մասնագետ:

3. Գործուղման վայրը և ժամկետները՝ Քիշնև, Մոլդովա, 2025 թվականի ապրիլի 8-10-ը:

4. Հրավիրող կողմը (առկայության դեպքում)՝ Եվրոպական միության արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցում (EaPeReg) գործող կարգավորող մարմինների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խումբ (IRB EWG):

5. Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը)՝ Մասնակցել Եվրոպական միության TAIX աջակցության գործիքի շրջանակում կազմակերպված «Թափանցիկության և վերջնական օգտատերերի տեղեկատվության կանոնների ներդրման» թեմայով աշխատանքային սեմինարին և Եվրոպական միության արևելյան գործընկերության էլեկտրոնային հաղորդակցության ոլորտը կարգավորող մարմինների ցանցում (EaPeReg) գործող կարգավորող մարմինների անկախության և լայնաշերտի հարցերով աշխատանքային խմբի (IRB EWG) 18-րդ հանդիպմանը:

6. Քննարկված թեմաները (հարցերը)՝ Եվրոպական միության TAIX աջակցության գործիքի շրջանակում կազմակերպված «Թափանցիկության և վերջնական օգտատերերի տեղեկատվության կանոնների ներդրման» թեմայով աշխատանքային սեմինարի ընթացքում Եվրոպական միության մի շարք անդամ պետությունների ներկայացուցիչներ (Ռումինիա, Լիտվա, Խորվաթիա, Սլովենիա, Գերմանիա և Իտալիա), որոնք զբաղվում են վերջնական օգտատերերի և բաժանորդների կողմից ներկայացված հայտերի և դիմում-բողոքների քննարկման աշխատանքներով, ներկայացրին իրենց ազգային կարգավորող մարմնի կողմից ձեռնարկված միջոցները:

Մասնավորապես, ներկայացվեց Եվրոպական միության էլեկտրոնային հաղորդակցության օրենսգրքի վերջնական օգտատերերի շահերի պաշտպանությանը վերաբերող դրույթները, որոնք պարտադիր են կատարման: Այս համատեքստում Լիտվայի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչը խոսեց տրաֆիկի թողունակության և ցանցային չեզոքության վերահսկման և բաց ինտերնետի վերաբերյալ ԵՄ կանոնակարգի համապատասխանության վերաբերյալ: Մասնավորապես նշվեց, որ օպերատորները եռամսյակային հաշվետվություններ են ներկայացնում կարգավորող մարմնին, կարգավորող մարմինը պարբերաբար վերլուծության է ենթարկում վերոնշյալ հաշվետվությունը և բաժանորդների կողմից ներկայացված դիմում բողոքները և վերլուծության արդյունքները ներկայացվում են էլեկտրոնային հաղորդակցության եվրոպական կարգավորողների մարմնին (BEREC) և Եվրոպական միությանը, որոնք էլ իրենց հերթին գնահատում են իրականացված գործողությունների համապատասխանությունը Եվրոպական միությունում գործող օրենսդրությանը և BEREC կանոնակարգերին:

Գերմանիայի ցանցային դաշնային գործակալության (BNetzA) ներկայացուցիչը խոսեց մատուցվող ծառայությունների որակի մասին, մասնավորապես՝ ռադիոհաճախականությունների լիցենզիայով սահմանված ծառայությունների որակի

ցուցանիշների մոնիթորինգի, վատ ազդանշանի մասին բաժանորդների կողմից հաղորդում ներկայացնելու մասին գործընթացի, ծառայությունների որակի շեղումների դեպքում ազգային կարգավորող մարմնի կողմից իրականացվող միջոցառումների մասին: Նշվեց, որ Գերմանիայում ծառայությունների որակը որոշվում է երեք հիմնական ցուցանիշների միջոցով՝ ծառայությունների որակ (Quality of Service (QoS)), փորձի որակ (Quality of Experience (QoE)) և ցանցի գործարկման որակ (network performance (NP)), որտեղ NP-ն չափելի տեխնիկական հատկանիշների մի շարք է, որոնք բնութագրում են ցանցի հնարավորությունները վերջնական օգտագործողներին ծառայություններ մատուցելու առումով, QoS-ը՝ հեռահաղորդակցության ծառայության բնութագրերի ամբողջությունը, որը կապված է ծառայության օգտագործողի հայտարարված և ենթադրյալ կարիքները բավարարելու հետ, իսկ QoE-ն ծառայության օգտագործողի հաճույքի կամ զայրույթի աստիճանն է, որը շատ սուբյեկտիվ ցուցանիշ է: Ազգային կարգավորող մարմնի և օպերատորի տեսանկյունից ծառայությունների որակի վրա տարբեր գործոններ են ազդում, օրինակ՝ շարժական կապի տեխնոլոգիաների զարգացումը, շարժական կապի ծառայությունների օգտագործման զարգացումը, ռադիոհաճախականությունների հասանելիության հետ կապված խնդիրներ, ազդանշանի խանգարումները, եղանակային պայմանները և այլն:

Միաժամանակ, ծառայությունների որակի չափումներն իրականացնելիս, ազգային կարգավորող մարմինը իրականացնում է հետևյալ չափումները՝

- Տվյալների փոխանցման արագությունը (վերբեռնումը և ներբեռնումը), ուշացումները,
- Խոսքի որակը, հաջողված և չհաջողված զանգերի գործակիցը,
- Ծածկույթը, ծառայությունների հասանելիությունը,
- Չհաջողված զանգերի գործակիցը, բիլինգի մասին բողոքների քանակը,
- Խարդախությունների կանխարգելումը,
- Պայմանագրի խզման պայմանները,
- Պայմանագրի փոփոխության պայմանները և բիլինգի տարբեր մեթոդների առկայությունը:

Իրականացված չափումների արդյունքում ստուգվում են ցանցի որակի հետևյալ չափանիշները՝

- Ազդանշանի որակը,
- Զանգի հուսալիությունը,

- Ներբեռնման արագությունը,
- Վերբեռնման արագությունը,
- Ուշացումները:

Շարժական կապի օպերատորները կարգավորողին են ներկայացնում տեղեկատվություն յուրաքանչյուր տրամադրված ռադիոհաճախականային տիրույթում ազդանշանի վերաբերյալ, կարգավորողը իրականացնում է ստուգումներ (drive-test), ինչի արդյունքում կարգավորողը ստեղծել է շարժական կապի ծածկույթի քարտեզ, որը թույլ է տալիս տեսնել շարժական կապի օպերատորների ցանցերի հասանելիությունը:

Կարգավորող մարմինը ստեղծել է երկու գործիք, որոնք թույլ են տալիս բաժանորդներին հաղորդել վատ ազդանշանների մասին (Breitbandmessung- and Funkloch-APP):

Այս գործիքների միջոցով բաժանորդները իրականացնում են չափումներ, որոնց արդյունքները փոխանցվում են կարգավորողին՝ համապատասխան քայլեր ձեռնարկելու նպատակով:

Վերոնշյալ գործիքների կիրառումը թույլ է տալիս կարգավորողին իրականացնել շուկայի վերլուծություն, տվյալների հավաքագրում, ինչպես նաև կիրառվելիք միջոցառումների համաչափության ապահովում:

Իտալիայի ազգային կարգավորող մարմնի ներկայացուցիչը ներկայացրեց իրենց կողմից ստեղծված հարթակը, որը թույլ է տալիս բաժանորդներին ուղարկել բողոքներ օպերատորներին, իսկ հարկ եղած դեպքում կարգավորողին: Նշվեց, որ միջնորդի առկայությունը դիմում-բողոքների լուծման հարցում պարտադիր պայման է՝ համաձայն Իտալիայի օրենսդրության: Այս պահանջը կատարելու նպատակով իտալական կարգավորողը ստեղծել է հատուկ հարթակ, որի միջոցով բաժանորդը դիմում-բողոքն ուղարկում է ուղիղ օպերատորին: Եթե բաժանորդը և օպերատորը չեն կարողանում գալ ընդհանուր հայտատարարի, համապատասխան գործը բացվում է կարգավորող մարմնում և կարգավորողը հանդես է գալիս որպես միջնորդ: Եթե բաժանորդ-կարգավորող-օպերատոր ձևաչափով հարցը չի լուծվում, բաժանորդները կարող են բողոքել դատական կարգով: Ներկայացվեց վերջին տարիների դիմում-բողոքների վիճակագրությունը: Հարթակի ներդրումը նպաստել է դիմում-բողոքների քանակի աճին, սակայն միևնույն ժամանակ դա նպաստել է նաև դրական ելքով լուծումների քանակի աճին:

IRB EWG խմբի հանդիպման ընթացքում քննարկվել են IRB EWG խմբի շրջանակում «ԵՄ-ն հանուն թվային օրակարգի» (EU4Digital) նախաձեռնության աջակցությամբ 2023-2024 թվականին իրականացված աշխատանքները:

Ներկայացվել են EU4Digital նախաձեռնության փորձագետների կողմից մշակված լայնաշեռ հասանելիության զարգացման մոնիթորինգի արդյունքները, ինչի մասով EU4Digital նախաձեռնության փորձագետները ԵՄ արևելյան գործընկերության երկրների ներկայացուցիչների հետ դեռևս քննարկում են տվյալների հավաքագրման և արդյունքների հաշվարկման մեթոդաբանությունը:

Խմբի հանդիպման շրջանակում քննարկվել են նաև լայնաշեռ ինտերնետ հասանելիության շուկայի վերլուծության նախնական արդյունքները: Տվյալները ներկայումս հավաքագրվում են միայն ԵՄ ԱԼԳ երկու երկրների՝ Հայաստանի և Ադրբեջանի համար, քանի որ Վրաստանը և Մոլդովան արդեն իսկ իրականացրել են վերոնշյալ վերլուծությունը:


Հանձնաժողովը EU4Digital նախաձեռնության փորձագետներին է ներկայացրել վերոնշյալ երկու հաշվետվությունների մշակման համար անհրաժեշտ տվյալները և դրանց հետագա քննարկումները կիրականցվեն աշխատանքային կարգով:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ հաշվետվությունները գտնվում են քննարկման փուլում, միայն ԵՄ ԱԼԳ երկրների ներկայացուցիչների հետ համաձայնեցնելուց հետո կներկայացվեն և խմբի շրջանակում կհաստատվեն դրանց վերջնական տարբերակները:

7. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝ Հանդիպման օրակարգը, ընթացքում ներկայացված բոլոր փաստաթղթերը, ներկայացումներն ու տեղեկատվությունը հասանելի է <https://www.eap-events.eu/ehome/18th-irb-ewg/agenda/> հղումով:

8. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները՝ Վերոնշյալ հանդիպումների արդյունքներով պայմանավորված՝ առաջարկում ենք շարունակել սպառողների շահերի պաշտպանության և ծառայությունների որակի վերաբերյալ ԵՄ համապատասխան օրենսդրության և ԵՄ անդամ պետությունների ազգային կարգավորող մարմինների փորձի ուսումնասիրությունը՝ հետագայում Հայաստանում դրանք ներդնելու նպատակահարմարության քննարկման նպատակով: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ երկկող ձևաչափով կշարունակվեն տվյալների հավաքագրման և դրանց վերլուծության վերաբերյալ քննարկումները, առաջարկում ենք շարունակել համագործակցությունը և համատեղ աշխատանքները ԵՄ ԱԼԳ, ԵՄ կարգավորող մարմինների և EU4Digital նախաձեռնության փորձագետների հետ՝ կարգավորման անկախության, լայնաշեռ ինտերնետ հասանելիության շուկայի վերլուծության և մոնիթորինգի մասով փորձի ուսումնասիրության ուղղությամբ, միևնույն

Ժամանակ առաջարկում ենք խմբի և EU4Digital նախաձեռնության աշխատանքների շրջանակում ավելացնել ծառայությունների որակի և սպառողների շահերի պաշտպանության նոր ուղղությունները:

Գործուղվող  15.04.2025թ. **Ս.Բարայան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող  15.04.2025թ. **Ս. Նարախանյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Գործուղվող  15.04.2025թ. **Լ. Գանջալյան**
(ստորագրությունը, ամսաթիվը)

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Ց ՈՒ Ն
ԳՐԹՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ


1. Մարմնի անվանումը ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով
 2. Գործողման մասին իրավական ակտի համարը Հրաման 240-ԳՔ.04.04.2025թ.
 3. ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության ֆինանսական վերլուծության բաժնի պետ՝
Սևակ Բաբայան
ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի ֆինանսատեխնիկական և դիմումների քննարկման վարչության դիմումների քննարկման բաժնի ավագ մասնագետ՝
Լուսինե Գանջալյան
ՀՀ ՀԾԿ հանձնաժողովի հեռահաղորդակցության վարչության ռեսուրսների կառավարման և տեխնոլոգիական զարգացման բաժնի գլխավոր
մասնագետ **Սիրանուշ Ղարախանյան**
(թվարկել՝ պատվիրակություն գործողելու դեպքում)
 4. Գործողման վայրը ք.Քիշնև /Մոլոդյա /
 5. Գործողման ժամկետները **07.04.2025-11.04.2025 թթ**
 6. Գործողման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
 - 1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)
 - 2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը
համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)
- V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով
սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ Բ. Գործողման անհատական իրավական ակտով տվյալ գործողման փաստացի կատարված
ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Սևակ Բաբայան	Լուսինե Գանջալյան	Սիրանուշ Ղարախանյան	Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապարհ- հաճախս	Ավիաճառաւթյան տեսակը (Էկոնոմ դաս)	-	-	-	-
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	-	-	-	-
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դրվար)	-	-	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-	-	-
	Օրերի քանակը	-	-	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով՝դրվար)	-	-	-	-
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	-	-	-	-
	Օրերի քանակը	-	-	-	-
	Ընդամենը (դրամ)	-	-	-	-
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար	-	-	-	-
	Մուտքի արտոնագրի վճար	-	-	-	-
	Այլ ծախսեր (նկարագրել)	-	-	-	-
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		-	-	-	-

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը,

(հավելվածը լրաց. 23.03.23 N 326-Լ)

Ամսաթիվ



15.04.2025թ.

